1052

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հ. Սիմիդյան

« 10 » 02 2022թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 0009-22

Ձեռնարկողը՝ ***«Արտաշատ Կահույք» ՍՊԸ***
Արարատի մարզ, ք. Արտաշատ, Շահումյան փող, 23

Գործունեությունը՝ ***Արտաշատ քաղաքի Շահումյան փողոց 23 հասցեում նախատեսվող բազմաֆունկցիոնալ համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
Արարատի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի՝ պարտականությունները կատարող Խ. Մարտիրոսյան

Առդիր՝ 9 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 0009-22

<10> 02 2022թ.

Արտաշատ քաղաքի Շահումյան փողոց 23 հասցեում բազմաֆունկցիոնալ համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝	«Արտաշատ Կահույք» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ
Գործունեությունը՝	«Գ» կատեգորիա
Տեղադրման վայրը՝	Արարատի մարզ, ք. Արտաշատ, Շահումյան փողոց 23

Ներածական մաս. Համաձայն ՀՀ-ի Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի 7-րդ ենթակետի, 1500 ք.մ և բարձր կառուցապատման մակերես ունեցող քաղաքաշինության ոլորտի կառույցներն ըստ շրջակա միջավայրի վրա ունեցած ազդեցության, դասակարգվում են «Գ» կատեգորիայի, ուստի սույն նախատեսվող գործունեությունը պահանջում է շրջակա միջավայրի վրա ազդեցությունների նախնական գնահատման հայտի պետական փորձաքննության և փորձագիտական եզրակացության ձեռք բերում:

Բազմաֆունկցիոնալ համալիրի կառուցման աշխատանքները նախատեսվում է իրականացնել Արարատի մարզ, ք. Արտաշատ, Շահումյան փող. 23 հասցեում:

Նախագծային աշխատանքների պատվիրատուն հանդիսանում է «Արտաշատ Կահույք» ՍՊԸ-Ն (այսուհետ՝ Կառուցապատող), նախագծային աշխատանքներն իրականացվել են Ա/Ձ Մարտուն Մկրտչյանի ճարտարապետական արվեստանոցի և «Մանոլա» ՍՊԸ կողմից:

Նախագիծը մշակվել է ՀՀ գործող շինարարական նորմատիվային պահանջների, Կառուցապատողի և Արտաշատի քաղաքապետարանի կողմից ներկայացված և նախագծային աշխատանքների համար հիմք հանդիսացող փաստաթղթերի համաձայն:

Նախագծման աշխատանքների համար հիմք են հանդիսացել Արտաշատի քաղաքապետարանի կողմից նախագծման թույլտվությունը /ճարտարապետահատակագծային առաջադրանքը, ՀՀ-ում գործող շինարարական նորմերը, Կառուցապատողի կողմից ներկայացված նախագծային առաջադրանքը, ինչպես նաև գործունեության տեղամասում իրականացված ինժեներաերկրաբանական ուսումնասիրությունները:

Նկարագրական մաս. Նախատեսվող գործունեության հողամասը գտնվում է Արտաշատ քաղաքի կենտրոնական մասում, Շահումյան-Գոլեցյան փողոցների անմիջապես հարևանությամբ: Կառուցապատվող տարածքը հարթ, մեկ հարկանի շենք-շինություններով զբաղեցված տարածք է: Հարևանությամբ գտնվում են հողամասեր, հասարակական և ընդհանուր օգտագործման

տարածքներ /դպրոց, մանկապարտեզ, այգի և այլն/ և այլ շինություններ: Նշված օբյեկտները նախագծվող բազմաֆունկցիոնալ համալիրի կառուցապատման տարածքից ընկած են 20-100մ հեռավորությունների վրա, իսկ դիտարկվող տարածքից 100մ հեռավորության վրա գտնվում է քաղաքային զբոսայգին:

Հողամասում բացակայում են ինժեներական ցանցերը և այլ ենթակառուցվածքները, որոնք ենթակա են տեղափոխման, առկա են քանդման ենթակա մեկ հարկանի /ենթակայան, պարիսպ, մեկ հարկանի շենքր/ շինություններ, որոնք քանդվելու են Արտաշատ համայնքի ղեկավարի կողմից տրված թիվ 11 քանդման թույլտվության համաձայն:

Տեղանքի ինժեներաերկրաբանական պայմանները գնահատվում են բարենպաստ նախագծվող բազմաֆունկցիոնալ համալիրի շինարարական աշխատանքների իրականացման համար, տարածքում բացակայում են շինարարության և կառուցվածքների վրա ազդող բնական երևույթները (սողանքներ, փլուզումներ և այլն):

Գործունեության իրականացման տեղանքին հարակից չկան արգելոցներ, ազգային պարկեր կամ հատուկ նշանակության պահպանվող տարածքներ, ինչպես նաև նախատեսվող տարածքում և տարածքի մերձակայքում չկան ազդեցության ենթակա պատմամշակութային հուշարձաններ, քանի որ տարածքը գտնվում է քաղաքային միջավայրում, կառուցապատված տարածքում:

Բնութագրվող տարածքն աչքի չի ընկնում բուսականությամբ, հողամասի որոշ հատվածներում առկա են ինքնաբերաբար աճած խոտածածկ, տարածքում բացակայում է ծառաթփուտային բուսականությունը:

Քանի որ, հողամասը գտնվում է ամբողջապես կառուցապատված տարածքում, Արտաշատ քաղաքի կենտրոնում, ուստի հայտի շրջանակներում չի դիտարկվում տեղանքում և հարակից տարածքներում բուսական կամ կենդանական տեսակների, էնդեմիկ կամ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակներ և կենդանական տեսակներ, ինչպես նաև կենդանիների միգրացիոն ուղիներ:

Համաձայն նախագծի կառուցապատվող հողամասի ընդհանուր մակերեսը կազմում է 5203.7քմ: Հողամասում նախագծված բազմաֆունկցիոնալ համալիրը ներառելու է 1 հարկանի ստորգետնյա ավտոկայանատեղի, վերգետնյա՝ 1 հասարակական հարկով և 6 բնակելի հարկերով 3 մասնաշենքեր: Վերգետնյա կառուցապատման աշխատանքները իրականացվելու են 1880.0քմ կառուցապատման մակերեսում, 48 կայանատեղիով ստորգետնյա ավտոհանգրվանը զբաղեցնելու է 1880.0 քմ մակերես:

Բազմաֆունկցիոնալ համալիրի բնակարանների թիվը կկազմի 115, որոնք կներառեն՝ 93 հատ 2 սենյականոց և 22 հատ 3 սենյականոց բնակարաններ:

Կառուցապատվող տարածքին մոտեցումը կապահովվի առկա ճանապարհներով, որոնք անցնում են հողամասի տարբեր կողմերով:

Նախատեսվող բազմաֆունկցիոնալ համալիրի ընդհանուր բնակելի մակերեսը կկազմի՝ 6427.0 քմ, իսկ բնակելի կառուցապատման մակերեսը՝ 8600.0 քմ, հասարակական նշանակության տարածքի մակերեսը կկազմի 1670.0 քմ, կանաչապատման մակերեսը՝ 2100 քմ:

Կոնստրուկտիվ լուծումների տեսանկյունից բնակելի մասնաշենքերը նախատեսվելու են միաձույլ երկաթ/բետոնե (ե/բ) շրջանակային հիմնակմախքի իրականացմամբ, ներառյալ՝ շենքի հիմքերը, սյուները, հեծանները և միջհարկային սալերը: Արտաքին և ներքին պատերը պեմզաբլոկ, արտաքին պատերը երեսպատվելու են սրբատաշ տուֆե և տրավերտինե սալերով: Էներգոարդյունավետության և ջերմամեկուսացման տեխնիկական լուծումների նպատակով բոլոր պատերը արտաքինից ջերմամեկուսացվելու են (40մմ հաստ.) փրփրապոլիստիրոլային ջերմամեկուսիչ սալերով և երեսպատվելու են (40 մմ հաստ.) բազալտե և տրավերտինե սալերով, շենքերի տանիքները նախատեսվելու են հարթ:

Բնակելի հարկերի ընդհանուր օգտագործման միջանցքները սարքավորված են լինելու ծխահեռացման համակարգով, իսկ բնակարաններում նախատեսվելու են ինքնաշխատ ծխային հրդեհային ազդարարարման սարքեր:

Նախատեսվող բազմաֆունկցիոնալ համալիրի ստորգետնյա ավտոհանգրվանը նախատեսված է նաև անհրաժեշտության և արտակարգ իրավիճակների դեպքում ծառայեցնել որպես ապաստարան, նախագծային լուծումներում հաշվի են առնված նաև սակավաշարժ խմբերի համար հարմարեցված թեքահարթակները՝ արտաքին մուտքերում:

Բնակելի թաղամասի արտաքին ինժեներական ցանցերի համար մշակվելու են վերջնական նախագծերը /ջրամատակարարում, ջրահեռացում, էլեկտրամատակարարում, գազամատակարարում/: Ինժեներական ցանցերի միացումն իրականացվելու է նշված ծառայությունները մատուցող կազմակերպությունների կողմից տրամադրված տեխնիկական պայմաններին համաձայն /ջրամատակարարում, ջրահեռացում, էլեկտրամատակարարում, գազամատակարարում/:

Համալիրի տարածքում նախատեսվում են տեղադրել կենցաղային աղբի հավաքման համար նախատեսվող աղբամաններ, որոնց տեղադրման տեղերը ճշտվելու են Արտաշատի համայնքապետարանի հետ:

Բազմաֆունկցիոնալ համալիրի ջրամատակարարման և ջրահեռացման գործընթացները կազմակերպվելու են գործող շինարարական նորմերի ու կանոնների, ինչպես նաև «Վեոլիա ջուր» ՓԲԸ-ի կողմից տրամադրված (14/10/2020թ.) թիվ ԱՐ 2562 տեխնիկական պայմանի համաձայն:
Այսպիսով, բնակելի շենքրեի ջրամատակարարումը, համաձայն տեխնիկական պայմանի, կկազմակերպվի տարածքի հարևանութամբ, Շահումյան-Գոլեցյան մայրուղիով անցնող d=110 մմ քաղաքային ջրատարից:
Կոյուղաջրերի և կենցաղային ջրերի արտաքին ջրահեռացումը, համաձայն տեխնիկական պայմանի, նախատեսվում է իրականացնել Շահումյան-Գոլեցյան մայրուղիով անցնող d=200 մմ կոլեկտրին միացմամբ:
Նախագծվող տարածքից մակերևութային ջրերի հեռացումը, համաձայն տեխնիկական պայմանի, իրականացվելու է Շահումյան-Գոլեցյան մայրուղիով անցնող d=400 մմ հեղեղատարին միացմամբ:

Ըստ հայտի բազմաֆունկցիոնալ համալիրի կենտրոնացված տաք ջրամատակարարման գործընթաց չի նախատեսվում, վերջինս կկազմակերպվելու է բնակիչների կողմից լոկալ լուծումների իրականացմամբ:

Համալիրի ջրամատակարարումն իրականացվելու է տարածքի հարևանությամբ անցնող քաղաքային ջրատարից, իսկ կոյուղին միացվելու է քաղաքային կոյուղատարին:

Բնակելի շենքերի գազամատակարարման գործընթացը իրականացվելու է «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից տրամադրվող տեխնիկական պայմանի համաձայն, էլ. մատակարարումը կատարվելու է համաձայն տեխնիկական պայմանների և գործող նորմերի ու կանոնակարգի:

Տարածքի մակերևութային ջրերի հեռացումը նախատեսված է կազմակերպված եղանակով, հեղեղատար կոյուղու համակարգի միջոցով: Տարածքի ցածրադիր տեղերում տեղադրվելու են անձրևընդունիչ հորեր, որտեղից անձրևաջրերը հեռացվելու են տարածքից և համաձայն տեխնիկական պայմանի միացվելու է քաղաքային հեղեղատար ցանցին: Նույն ցանցով և կհեռացվի շենքերի տանիքներից հավաքվող անձրևաջրերը և օդափոխության, օդորակման սարքավորումներից առաջացած կոնդենսատները:

Բարեկարգման աշխատանքների շրջանակում շենքերի շուրջ ստեղծվելու են սալվածքներ և մայթեր, իրականացվելու են շրջակա տարածքների բարեկարգման աշխատանքներ: Այս

աշխատանքների շրջանակում նախատեսվում է՝ երթևեկելի հատվածների, անցուղիների ասֆալտապատում, մայթերի ստեղծում, բազալտե եզրաքարերի իրականացում:

Ինչպես արդեն նշվել էր տարածքում կստեղծվի նաև 2100ք.մ մակերեսով կանաչ գոտի: «Կանաչ գոտիների բարեկարգման նախագիծ»-ը կհամաձայնեցվի Արտաշատի քաղաքապետարանի հետ: Կանաչապատման աշխատանքների շրջանակում նախատեսվում է արժեքավոր ծառատեսակների և բուսատեսակների տնկում, որոնց ընտրությունը կատարվելու է հաշվի առնելով տեղանքի բնակլիմայական պայմանները: Կանաչ գոտիներում տնկվելու են 65 հատ տարբեր ծառատեսակների ծառեր (արևելյան սոսի, սրատերև թխկի, արծաթափայլ եղևնի, լացող ուռենի, սյունաձև թույա), 30 հատ թփատեսակներ (սովորական եղրևանի և թելատու արմավաշուշան), իրականացվելու է ճմապատում (տոսախ մշտադալար և կիպրոս 500ք.մ սիզամարգերի ստեղծում):

Նորաստեղծ կանաչ գոտիներում անհրաժեշտ սևահողը (356խմ ծավալով) մատակարարվելու է լիցենզավորված մատակարարներից՝ պահպանելով ՀՀ-ում գործող օրենսդրական շրջանակը: Կանաչապատման նախագիծը կհաստատվի Արտաշատի քաղաքապետարանի կողմից, իսկ կանաչապատ գոտիների ոռոգումը իրականացվելու է ոռոգման ներքին ցանցի միջոցով, որի համար ջուրը նախատեսվում է վերցնել տարածքով անցնող ոռոգման ջրագծից:

Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունը և վնասակար ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր, այդ թվում՝

Նախատեսվող գործունեության ընթացքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները և ռիսկերը գնահատվում են նախատեսվող բազմաֆունկցիոնալ համալիրի շինարարական աշխատանքերի ընթացքում, մասնավորապես, գնահատվում են անօրգանական փոշու և այլ ծխագազերի արտանետումներ, աղմուկի մակարդակի աճ շին-գործողությունների ընթացքում, սակայն նշված ազդեցությունները կկրեն ժամանակավոր բնույթ և կլինեն տեղայնացված՝ հիմնականում ընդգրկելով նախատեսվող գործունեության տեղամասը:

Ըստ ազդեցության աստիճանի և ինտենսիվության՝ շրջակա միջավայրի վրա բոլոր բացասական ազդեցությունները և ռիսկերը գնահատվում են մինիմալ և կառավարելի գործունեության ընթացքում՝ հաշվի առնելով նախատեսվող շինարարական աշխատանքների ծավալը և բնույթը, ինչպես նաև հեռավորությունը զգայուն ազդակակիրներից:

Կառուցապատման աշխատանքների ընթացքում հիմնականում կանխատեսվում են անօրգանական փոշու ժամանակավոր արտանետումներ հողային և քանդման աշխատանքների ընթացքում, այդ թվում նաև հորատման, բեռնման, թափոնակույտման աշխատանքների ընթացքում հողային հանույթից փոշու արտանետումներ:

Շինարարության ընթացքում վերը նշված արտանետումները կլինեն տեղայնացված և չեն դիսպերսվի տարածքի սահմաններից դուրս՝ հաշվի առնելով մասնիկների մեծ չափերը և դրանց արագ գրավիմետրիկ նստելու հատկությունը: Հետևաբար, փոշու արտանետումները չեն գերազանցելու ՀՀ թույլատրված նորմերը:

Ըստ ներկայացված հայտի նախատեսվում է նախատեսվող գործունեությունից ակնկալվող բացասական ազդեցությունները մեղմացնող և/կամ բացառող հիմնական բնապահպանական, աշխատանքի և առողջության ապահովմանն ուղղված միջոցառումներ որոնցից են.

- տեղեկատվության հրապարակում և հանրային լսումներ,
- շինարարական հրապարակի ժամանակավոր ցանկապատում, լուսավորության ապահովում, տեղեկատվական ցուցանակների տեղադրում,
- շինարական աղբի և ավելորդ ոչ պիտանի գրունտի կանոնավոր հեռացում և թափոնակույտում Արտաշատի քաղաքապետարանի կողմից հատկացված աղբավայրում,

- հրապարակում կենցաղային թափոնների համար փակ աղբամանների տեղադրում, կենցաղային աղբի հեռացում հասարակական աղբաման,
- շինարարական հրապարակի ջրցանում և փոշու արտանետումների մակարդակների կառավարում ՀՀ թույլատրելի նորմերի սահմանում,
- շինարարական մեքենաների տեղաշարժի իրականացում սահմանափակ՝ 30 կմ/ժ չգերազանցող արագությամբ, իսկ բեռնատարերի դեպքում՝ թափքի ծածկի առկայությամբ,
- շինհրապարակից դուրս գալիս մեքենաների անիվների լվացման միջոցառումներ ապահովվում,
- աղմուկ առաջացնող աշխատանքներն իրականացում թույլատրելի մակարդակների սահմանում և օրվա ցերեկային ժամերին՝ 14.00-18:00,
- շինարարական նյութերի ձեռք բերում լիցենզավորված մատակարարից,
- վառելիքի և նավթանման նյութերի պահում բետոնե/ մետաղական կամ ավազե հիմքերի վրա
- արտակարգ իրավիճակների կանխարգելման միջոցառումների ընթացակարգերի և կոնտակտային տվյալների պաստառների ձևով փակցնում հրապարակում, այդ թվում հակահրդեհային անվտանգության պաստառների, հրդեհների մասին ուղեցույց- հիշեցումների փակցնում,
- աշխատանքի և առողջության անվտանգության ապահովման միջոցառումների իրականացում ներառյալ՝ բանվորական կազմի ապահովվում սեզոնային արտահագուստով և անվտանգության սաղավարտներով, անհատական պաշտպանիչ դիմակներով և այլն,
- մեքենաների վառելիքի լիցքավորումը, քսայուղերի փոխարինման կազմակերպում հիմնականում շինհրապարակից դուրս և մասնագիտացված կենտրոններում,
- նախագծվող տեղամասում հետշինարարական բարեկարգման և կանաչապատման աշխատանքների կիրականացում ՝ ըստ հաստատված նախագծի:

Նորատունկ բուսականության խնամքը հետագայում իրականացվելու է բազմաֆունկցիոնալ համալիրի սպասարկման աշխատանքների շրջանակում, ինչը ներառելու է նաև նորատունկ կանաչ գոտու վիճակի մշտադիտարկումները, որի ընթացքում կպչողականություն չապահովող ծառատեսակները փոխարինվելու է նորերով:

Բացի վերը նշված բնապահպանական միջոցառումներից նախատեսվում է նաև հետևյալ մի շարք միջոցառումները՝ կառուցվող շենքերի արտաքինից և ներքինից ծածկում համապատասխան բարձրության անթափանց պաստառներով, աշխատանքների ընթացքում մեքենա-սարքավորումների տեխնիկական վիճակի պատշաճ մակարդակով հսկում, այդ թվում նաև մեքենա-սարքավորումները շահագործում բացառապես աղմկակլանիչների և խլացուցիչների առկայության դեպքում, անսարքությունների հայտնաբերման դեպքում համապատասխան միջոցառումներ իրակնացում և այլն: Բնակելի շենքերի կառուցման ընթացքում հարակից կառույցների վրա հասցրված ցանկացած ֆիզիկական վնասի վերացում շինարար կապալառուի կողմից՝ սեփական միջոցների հաշվին և այլն:

Հնարավոր արտակարգ իրավիճակների՝ հրդեհի առաջացման, հեղուկ նյութերի արտահոսքերի, աշխատողների վնասվածքների, շահագործվող տեխնիկայի հետ վթարների, անբարենպաստ օդերևութաբանական պայմանների դեպքում նախատեսվում է մի շարք միջոցառումներ որոնցից են՝ մինչ աշխատանքների սկիզբը բոլոր աշխատողների այդ թվում նաև վարորդների հրահանգավորում ըստ աշխատանքի անվտանգության կանոնների, շնարարական հարթակի և տրանսպորտային միջոցների հագեցվածություն հրդեհաշիջման առաջնային միջոցներով, առաջին բուժօգնության դեղատուփով՝ աշխատողների դրանց ճիշտ օգտագործմանն, ինչպես նաև առաջին բուժօգնության ցուցաբերմանն ուղղված հրահանգավորում/պատրաստվածություն, հեղուկ նյութերի և քսայուղերի տեղափոխում շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահում հատուկ տակդիրների վրա՝

հնարավոր արտահոսքերը բացառելու համար, հնարավոր վնասվածքների, պատահարների դեպքում տուժածին առաջին բուժօգնության ցուցաբերում, իսկ անհրաժեշտության դեպքում տեղափոխում բժշկական հաստատություն և այլն: Տանիքում և բարձրության վրա մշուշի, ամպրոպի և քամու 6 բալ արագության գերազանցման դեպքերում աշխատանքներ իրականացնելու արգելում:

Հակահրդեհային անվտանգության ապահովվում շինհրապարակում, աշխատատեղում և աշխատանքի տեղամասերում համապատասխան «Հակահրդեհային անվտանգության կանոններ» պահանջներին, շինարարական հրապարակի, բաց պահեստների հակահրդեհային միջտարածությունների ժամանակին մաքրում հրդեհավտանգ թափոններից և աղբից, հրդեհաշիջման համար նախատեսված ջրաղբյուրների ճանապարհների և անցումների միշտ ազատ լինելու ապահովվում, շինարարության ընթացքում ճանապարհների փակման դեպքում շրջանցման ուղղությունը ցույց տվող ցուցանակների, աշխատանքների տեղամասերում հրդեհաշիջման սկզբնական միջոցների /տարածքում տեղադրում հրշեջ հիդրանտ/ տեղադրում:

Ներկայացվող գործունեության ընթացքում ուղղակի ազդեցություններ ջրային համակարգերի վրա չեն կանխատեսվում, քանի որ հողամասի մերձակայքում չկան ազդեցության ենթակա ջրային մարմիններ:

Տարածքում առկա շինությունների քանդման աշխատանքներից առաջացած և շինարարական աշխատանքներից գոյացած շին աղբի ծավալը կկազմի 1116 խ.մ, (ծածկագիր՝ 9120060001004, վտանգավորության դաս՝ IV), որը տեղափոխվելու է 5 կմ հեռավորության վրա գտնվող Արտաշատի աղբավայր:

Քանդման (ապամոնտաժման) աշխատանքների իրականացումը կազմակերպելու է օրենսդրությամբ սահմանված կարգով Արտաշատի քաղաքապետարանի հետ համաձայնեցված: Այս աշխատանքների վերահսկողությունը իրականացվելու է նախատեսվող գործունեության Պատվիրատուի կողմից:

Շինարարական աշխատանքների ընթացքում կառաջանա շուրջ 7800 խ.մ ավելորդ գրունտ և 120 խ.մ շինաղբ, որը ժամանակավոր կուտակվելու է շինհրապարակում կազմակերպված կույտերի տեսքով՝ հատուկ հատկացված տեղերում, այնուհետև կանոնավոր կերպով (ամենաուշն երեք օրը մեկ) տեղափոխվելու և թափոնակույտվելու է Արտաշատի քաղաքապետարանի կողմից թույլատրված աղբավայր:

Շինարարական աշխատանքների ընթացքում հոսքաջրերի առաջացում չի կանխատեսվում՝ հաշվի առնելով աշխատանքների բնույթը, բացի այդ աշխատանքները կատարվելու են ցանկապատված շինհրապարակի ներսում, ինչը կբացառի և/կամ կնվազեցնի հնարավոր հոսքաջրերի արտահոսքերը և այլ արտանետումները շինարարական հրապարակից:

Շինարարական աշխատանքների ընթացքում կառաջանա կեղտաջրեր (բետոնաջուր՝ բետոնախառնիչների լվացումից), որոնց հեռացման համար հրապարակում նախատեսվում է տեղադրել կեղտաջրերի հեռացման տարա (≥10 խ.մ), որտեղ և կհեռացվեն կեղտաջրերը, ինչպես նաև տեղումների ընթացքում հնարավոր հոսքաջրերի առաջացման դեպքում վերջիններս ևս կհեռացվեն տարայում կամ կուղղորդվեն տեղամասին կից քաղաքային հեղեղատար: Տարայում հետերոգեն զանգվածի նստեցումից հետո վերջիններս հնարավոր կլինի շին աղբի հետ հեռացնել աղբավայր, իսկ դեկանտված ջուրը՝ օգտագործվելու է ջրցանման նպատակով կամ շինարարական աշխատանքներում:

Շինարարության ողջ ընթացքում առաջացող յուղերի բանեցված մնացորդային քանակները հավաքվելու և պահվելու են հերմետիկ փակ և մետաղական տարաներում, իսկ հետագայում հանձնելու են վերջիններիս վերամշակմամբ զբաղվող լիցենզավորված կազմակերպության, բացի այդ հրապարակում քսայուղերի և հեղուկ վառելիքի տարաները պահվելու են հատուկ անթափանց (ավազե, մետաղական կամ բետոնե) հիմքերի վրա, ինչը հնարավորինս բացառելու է

վերջիններիս արտահոսքով պայմանավորված հողային համակարգերի վրա հնարավոր աղտոտման ռիսկերը:

Շենքերի քանդումից առաջացող թափոնների, այդ թվում՝ փայտանյութի թափոններ, պատի բետոնե իրեր, սյուներ, փչացած և աղտոտված սալիկներ և այլն տեղափոխվելու է Արտաշատի համայնքապետարանի կողմից հատկացված վայր:

Հողային աշխատանքների ժամանակ նախատեսվում է հանել հողային շերտը /մոտ 100 խմ ծավալով/ կուտակել և հետագայում օգտագործել կանաչ տարածքի բարեկարգման և նոր սիզամարգերի ստեղծման աշխատանքների համար: Մինչ օգտագործումը հողաբուսաշերտը կույտերով նախատեսվում է պահպանել շին. հրապարակում՝ դրա համար նախատեսված առանձին տեղամասում, հողաբուսաշերտը պահպանվելու է այնպիսի տարածքում, որտեղ կբացառվեն շինարարությունից առաջացող ցանկացած թափոնները, հնարավոր էրոզիոն երևույթները և այլն:

Հողային աշխատանքների ընթացքում առաջացած գրունտը, որը գնահատվում է հետագա օգտագործման համար ոչ պիտանի նախատեսվում է տեղափոխել աղբավայր:

Նշված միջոցառումների պատշաճ մակարդակով ապահովվման դեպքում, հնարավոր կլինի նվազագույնի հասցնել արտակարգ իրավիճակների ռիսկերը, իսկ առաջացման դեպքում հնարավոր կլինի ձեռնարկել արագ և արդյունավետ հակազդման միջոցառումներ:

Համալիրի կառուցապատման ընթացքում իրականացվող հիմնական բնապահպանական միջոցառումների գումարային արժեքը (առանց հարկերի) կկազմի 9713.25 հազ. ՀՀ դրամ:

Շինհրապարակում և հարակից տարածքներում մոնիթորինգի իրականացումը հնարավորություն կտա հսկելու շինարարական աշխատանքների ազդեցությունը շրջակա միջավայրի, կամ հարակից տարածքների վրա՝ վնասակար ազդեցությունների կանխման և կանխարգելման միջոցառումների մշակման համար:

Մոնիթորինգի իրականացման հիմնական նպատակն է ստեղծել տեղեկատվություն միջավայրի փոփոխությունների մասին:

Ըստ հայտի բնակելի համալիրի շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն/մեղմացմանն ուղված հետևյալ մշտադիտարկումները.

1. Մթնոլորտային օդի որոակի մոնիթորինգ՝ ամիսը երկու անգամ:
2. Շրջակա տարածքների հողային ծածկույթի մոնիթորինգ՝ ամիսը մեկ անգամ:
3. Տեխնիկական միջոցների աշխատանքային վիճակի՝ մասնավորապես չեզոքացուցիչ սարքավորումների սարքին վիճակի պարբերական մշտադիտարկումներ, ամիսը մեկ անգամ հաճախականությամբ:
4. Աղմուկի և թրթռումների մակարդակի չափումներ:

Նախատեսվում է նաև իրականացնել մթնոլորտային օդի որակի, աղմուկի, թրթռման, հողային ծածկույթի մշտադիտարկումներ ևս:

Որպես սահմանային թույլատրելի խտությունները ընդունվելու են. ածխածնի օքսիդի համար՝ 5մգ/մ^3, ազոտի երկօքսիդի համար՝ 0.2մգ/մ^3,մրի համար՝ 0.15մգ/մ^3:

Շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման ու մեղմացման ուղղված մշտադիտարկումների իրականացման նպատակով, որը նախատեսվում է հողային աշխատանքների ժամանակ /որի տևողությունը երեք ամիս է/ տրամադրվելու է 250.0 հազ.դրամ:

Կառուցապատողի կողմից իրականացվելու է կանոնավոր մոնիտորինգ, որպեսզի վերահսկվի ԲՄԾ-ում նախանշված մեղմացնող միջոցառումների կատարումը և դրանց արդյունավետությունը:

Միջոցառումների իրականացման ամենօրյա վերահսկողությունը իրականացվելու է տեխնիկական վերահսկման խորհրդատուի կողմից: Տեխնիկական վերահսկողների կողմից հսկվելու են նաև բնապահպանական, առողջության և աշխատանքային անվտանգության

հարցերը և ժամանակին տեղեկացվելու է Կառուցապատողին նկատված անհամապատասխանությունների մասին:

Պատճառաբանական մաս. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, նախնական գնահատման և փորձաքննության փուլերում, Արարատի մարզի Արտաշատ քաղաքի համայնքապետարանի վարչական շենքում անցկացված հանրային քննարկումներում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության:

Հայտի վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ՝ «Արարատի մարզպետարանից» «Արտակարգ իրավիճակների», «Առողջապահության», «Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի» նախարարություններից, «Քաղաքաշինության կոմիտեից», «Կադաստրի կոմիտեից», դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել «Հայտի» լրամշակումներում:

Ամփոփելով Հայտի բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել որ, շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք կառաջանան նախատեսվող գործունեության շինարարական աշխատանքների իրականացման արդյունքում, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

Փորձաքննական պահանջներ

1. Արարատի մարզ, ք. Արտաշատ, Շահումյան փող. 23 հասցեում բազմաֆունկցիոնալ համալիրի կառուցման աշխատանքների ընթացքում անհրաժեշտ է պահպանել ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի N 15 հրամանով հաստատված «Կազմակերպություններում աշխատողների սանիտարակենցաղային սենքերի» N 2.2.8-003-12 սանիտարական կանոնների և նորմերի պահանջները:
2. Համաձայն ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի «Հիմնարկները, իրավաբանական և ֆիզիկական անձինք աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից պարտավոր են դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին»:
3. Նոր կառուցվող բնակելի բազմաբնակարան շենքերում Էներգախնայողության և էներգաարդյունավետության հետ կապված միջոցառումները իրականացնել՝ համաձայն ՀՀ կառավարության 12.04.2018 N425-Ն որոշմամբ սահմանված տեխնիկական պահանջների:
4. Աշխատողների անհատական պաշտպանության միջոցները պետք է համապատասխանեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափանիշներին (մշտապես սաղավարտների կիրառում, անհրաժեշտության դեպքում դիմակներ և պաշտպանիչ ակնոցներ, պաշտպանիչ հագուստ և կոշիկներ):
5. Իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն/մեղմացմանն ուղղված մշտադիտարկումներ:
6. Շինարարության ընթացքում պահպանել բնապահպանական և մոնիթորինգի պլաններում նախատեսված միջոցառումների իրականացումը:
7. Արտադրական վտանգավոր օբյեկտների (կաթսայատուն, վերելակ և այլն) կառուցում նախատեսելու դեպքում աշխատանքային նախագիծը ներկայացնել նաև տեխնիկական անվտանգության փորձաքննության:

8. Վերջնական նախագծում և շինարարական աշխատանքների ընթացքում հաշվի առնել «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի, «ՀԷՑ» ՓԲԸ-ի և «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմանի պահանջները:
9. Բոլոր տիպի շինարարական աշխատանքները իրականացնել պահպանելով պետական նորմերը, կանոնները, ստանդարտները:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո որպես պարտադիր պահանջ անհրաժեշտ է՝

- շինհրապարակի տարածքը սահմանազատել ժամանակավոր ցանկապատով, ապահովել լուսավորությամբ տեղադրել մուտք գործող արգելող նշաններ,
- շենքերը և շինությունները ծածկել շինարարությանը համապատասխան բարձրության անթափանց թաղանթով,
- ժամանակավոր օգտագործված տարածքները վերականգնել, հնարավորինս բերելով սկզբնական վիճակի,
- ամբողջ շինարարական աղբը, նյութերի մնացորդները և սարքավորումները հեռացնել շին հրապարակից,
- շրջակա տարածքները (մայթերը, ճանապարհները) զերծ պահել շինարարական աղբից՝ փոշին նվազագույնի հասցնելու նպատակով,
- շինարարական տրանսպորտային միջոցները և սարքավորումները պետք է լվացվեն նախատեսված տարածքներում, որտեղից չի առաջանա ջրի արտահոսք,
- շինհրապարակից ելքի ժամանակ անհրաժեշտ է տեխնիկական միջոցների անվադողերի լվացում,
- ծառերի և թփերի տնկման վայրը և քանակը համապատասխանեցնել կանաչապատման նախագծին, «Կանաչ գոտիների բարեկարգման նախագիծ» համաձայնեցնել Արտաշատի քաղաքապետարանի համապատասխան բաժնի մասնագետի հետ,
- ապահովել ծառերի և թփերի 90% կպչողականությունը, իսկ կպչողականություն չապահովող ծառատեսակները փոխարինել նորերով, որպես խնամքի պարտադիր միջոցառում ապահովել կանաչ տարածքների ոռոգումը, կանաչապատումը իրականցնել տարածքի բնակլիմայական պայմաններին բնորոշ ծառաթփային տեսակներով:

Առկա առաջարկվող մեղմացնող միջոցառումները ընդունել պարտադիր կատարման ենթակա:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Արտաշատ քաղաքի Շահումյան փողոց 23 հասցեում նախատեսվող բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական փորձաքննական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն»
ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ՝ Ն. Նասիբյան